

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ղազախստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով երկու պետությունների միջև բարեկամական հարաբերությունները զարգացնելու ցանկությամբ, հիմնվելով 1999թ. սեպտեմբերի 2-ի՝ Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև բարեկամության և համագործակցության մասին պայմանագրի և 2014թ. մայիսի 29-ի՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի վրա, երկու պետությունների քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի իրավական կանոնակարգման նպատակով, համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

1. Կողմերի պետությունների քաղաքացիները, անկախ բնակության վայրից, իրավունք ունեն մուտք գործելու, դուրս գալու, տարանցմամբ անցնելու, տեղաշարժվելու և մյուս Կողմի պետության տարածքում գտնվելու մինչև 90 (իննսուն) օր մուտքի պետության պետական սահմանը հատելու օրվանից՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված՝ վավերական ճամփորդական փաստաթղթերից մեկի հիման վրա:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ պետության տարածքում գտնվելու ժամկետը, Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրության համաձայն, կարող է երկարացվել:

Հոդված 2

1. Մի Կողմի պետության տարածքում ժամանակավորապես գտնվող՝ մյուս Կողմի պետության քաղաքացիներն ազատվում են մուտքի պետության իրավասու մարմիններում 30 (երեսուն) օրվա ընթացքում գրանցվելու (ըստ գտնվելու վայրի՝ հաշվառման կանգնելու) պարտավորությունից:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ ժամանակավորապես գտնվելու ժամկետը հաշվարկվում է մի Կողմի պետության քաղաքացու՝ մյուս Կողմի պետության տարածք մուտք գործելու օրվանից, որը հաստատվում է սահմանային հսկողության մարմինների կողմից մյուս Կողմի պետության տարածք մուտք գործելու պահին կատարված նշանագրումով կամ սահմանային հսկողության մարմինների կողմից մյուս Կողմի պետության տարածք մուտք գործելու պահին անձնագրում կատարված նշագրումով:

3. Մի Կողմի պետության քաղաքացու՝ 30 (երեսուն) օրից ավել ժամկետով մյուս Կողմի պետության տարածքում գտնվելու դեպքում տվյալ քաղաքացին պարտավոր է գրանցվել (ըստ գտնվելու վայրի՝ հաշվառման կանգնել) մուտքի պետության իրավասու մարմիններում՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 3

1. Սույն Համաձայնագրին համապատասխան՝ վավերական ճամփորդական փաստաթղթերն են.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր,
- Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիր,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտ,
- Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական (միայն Հայաստանի Հանրապետություն վերադարձի համար):

Ղազախստանի Հանրապետության քաղաքացիների համար՝

- Ղազախստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր,
- Ղազախստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիր,

- Ղազախստանի Հանրապետության ծառայողական անձնագիր,
- Ղազախստանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող վկայական,
- Ղազախստանի Հանրապետության նավաստու անձը հաստատող փաստաթուղթ (նավային դերի կամ դրանից քաղվածքի առկայության դեպքում),
- Ղազախստանի Հանրապետություն վերադարձի վկայական (միայն Ղազախստանի Հանրապետություն վերադարձի համար):

2. Կողմերը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցագրի փոխանակման օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում կփոխանակեն սույն Համաձայնագրում նշված՝ վավերական ճամփորդական փաստաթղթերի նմուշները:

3. Կողմերը դիվանագիտական ուղիներով հայտագրերի փոխանակմամբ ժամանակին միմյանց կձանուցեն վավերական նոր ճամփորդական փաստաթղթեր գործածության մեջ դնելու, ինչպես նաև գործող փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմերը կփոխանակեն այդ փաստաթղթերի նմուշները ոչ ուշ, քան նշված փաստաթղթերը գործողության մեջ դնելուց 30 (երեսուն) օր առաջ:

Հոդված 4

Կողմերից մեկի պետության քաղաքացիները կարող են մուտք գործել, դուրս գալ, տարանցմամբ անցնել մյուս Կողմի պետության տարածքով միջազգային ուղևորափոխադրումների համար նախատեսված սահմանային անցակետերով:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրը չի սահմանափակում Կողմերից յուրաքանչյուրի իրավունքը՝ մերժել մյուս Կողմի պետության այն քաղաքացիների մուտքը կամ ձեռնարկել նրանց վերադարձնելու միջոցներ, որոնց ներկայությունը իր պետության տարածքում ցանկալի չէ:

Հոդված 6

1. Մի Կողմի պետության քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածքում սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված փաստաթղթերը կորցնելու դեպքում պարտավոր են այդ մասին տեղեկացնել գտնվելու վայրի պետության իրավասու մարմիններին, որոնք տրամադրում են փաստաթղթերը կորցնելու մասին հայտը հաստատող տեղեկանք:

2. Կողմերի պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկներն իրենց քաղաքացիներին կտրամադրեն սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված՝ իրենց պետություն վերադառնալու համար ճամփորդական փաստաթուղթ՝ Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան:

Հոդված 7

Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են իրենց պետության տարածք մուտք գործելու, այնտեղից դուրս գալու, այնտեղ գտնվելու պայմանների փոփոխության մասին ոչ ուշ, քան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց 30 (երեսուն) օր առաջ:

Հոդված 8

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և կձևակերպվեն առանձին արձանագրություններով:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը վերաբերող վիճելի հարցերը կլուծվեն Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 10

1. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջովին կամ մասամբ կասեցնելու սույն Համաձայնագրի գործողությունը, եթե դա անհրաժեշտ է պետության անվտանգության ապահովման, հասարակական կարգի կամ իր պետության բնակչության առողջության պաշտպանության համար:

2. Կողմերը միմյանց անհապաղ կտեղեկացնեն սույն Հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցառումների ձեռնարկման և դրանց վերացման մասին ոչ ուշ, քան նման որոշում ընդունելուց 15 (տասնհինգ) օր առաջ:

3. Սույն Համաձայնագրի գործողության ամբողջովին կամ մասամբ դադարեցումը չի տարածվում Կողմերից մեկի պետության տարածքում սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան գտնվող՝ մյուս Կողմի պետության քաղաքացիների գտնվելու կարգի վրա:

Հոդված 11


1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անժամկետ և ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 30 (երեսուն) օր հետո:

2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում է 2006 թվականի նոյեմբերի 6-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև՝ քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին» համաձայնագրի գործողությունը:

3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը այդ մասին մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելու միջոցով: Այդ դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է նման ծանուցում ստանալու օրվանից 90 (իննսուն) օր հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2024 թվականի ապրիլի «15»-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Տեքստերի միջև տարածայնությունների դեպքում Կողմերը հղում կկատարեն ռուսերեն տեքստին:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**



**Ղազախստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**



**Соглашение
между Правительством Республики Армения и Правительством
Республики Казахстан о поездках и порядке пребывания граждан**

Правительство Республики Армения и Правительство Республики Казахстан, далее именуемые Сторонами,
руководствуясь желанием развивать дружественные отношения между двумя государствами,
на основе Договора о дружбе и сотрудничестве между Республикой Армения и Республикой Казахстан от 2 сентября 1999 года и Договора о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года,
с целью правового упорядочения поездок и порядка пребывания граждан обоих государств,
согласились о нижеследующем:

Статья 1

1. Граждане государств Сторон независимо от места проживания имеют право въезжать, выезжать, следовать транзитом, передвигаться и пребывать на территории государства другой Стороны сроком до 90 (девяносто) суток со дня пересечения государственной границы государства въезда по одному из действительных документов, указанных в статье 3 настоящего Соглашения.

2. Срок пребывания, на территории государства другой Стороны, указанный в пункте 1 настоящей статьи, может быть продлен, если это предусмотрено национальным законодательством государств Сторон.

Статья 2

1. Граждане государства одной Стороны, временно пребывающие на территории государства другой Стороны, освобождаются от обязанности регистрации (постановки на учет по месту пребывания) в компетентных органах государства въезда в течение 30 (тридцать) календарных дней.

2. Срок временного пребывания, указанный в пункте 1 настоящей статьи, исчисляется с даты въезда гражданина государства одной Стороны на территорию государства другой Стороны, подтвержденной отметкой органов пограничного контроля, проставленной при въезде на

территорию государства другой Стороны, или отметкой в паспорте, проставленной органами пограничного контроля при въезде на территорию государства другой Стороны.

3. В случае пребывания гражданина государства одной Стороны на территории государства другой Стороны свыше 30 (тридцать) календарных дней, указанный гражданин обязан зарегистрироваться (встать на учет по месту пребывания) в компетентных органах государства въезда, если это предусмотрено законодательством данного государства.

Статья 3

1. Действительными проездными документами для поездок за рубеж в соответствии с настоящим Соглашением являются:

для граждан Республики Армения:

- паспорт гражданина Республики Армения;
- дипломатический паспорт Республики Армения;
- идентификационная карта гражданина Республики Армения;
- свидетельство на возвращение в Республику Армения (только для возвращения в Республику Армения).

для граждан Республики Казахстан:

- паспорт гражданина Республики Казахстан;
- дипломатический паспорт Республики Казахстан;
- служебный паспорт Республики Казахстан;
- удостоверение личности гражданина Республики Казахстан;
- удостоверение личности моряка Республики Казахстан (при наличии судовой роли или выписки из нее);
- свидетельство на возвращение в Республику Казахстан (только для возвращения в Республику Казахстан).

2. Стороны обмениваются образцами действительных проездных документов до истечения 30 (тридцать) дней с даты получения по дипломатическим каналам предусмотренного статьей 11 настоящего Соглашения последнего письменного уведомления о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу.

3. Стороны по дипломатическим каналам путем обмена нотами будут вовремя уведомлять о введении в действие новых проездных документов, а также изменениях действующих документов.

Стороны обмениваются образцами этих документов не позднее, чем за 30 (тридцать) календарных дней до введения в действие упомянутых документов.

Статья 4

Граждане государства одной из Сторон могут въезжать, выезжать и следовать транзитом через территорию государства другой Стороны в пограничных пунктах, предназначенных для международных пассажирских перевозок.

Статья 5

Настоящее Соглашение не ограничивает право каждой из Сторон отказать во въезде или применять меры по возвращению граждан государства другой Стороны, чье присутствие на территории своего государства считается нежелательным.

Статья 6

1. Граждане государства одной Стороны, в случае утраты на территории государства другой Стороны документов, указанных в Статье 3 настоящего Соглашения, обязаны сообщить об этом компетентным органам государства пребывания, которые выдают справку, подтверждающую заявление об утрате документов.

2. Дипломатические представительства и консульские учреждения государств Сторон будут выдавать своим гражданам упомянутый в Статье 3 настоящего Соглашения проездной документ для возвращения в свое государство в соответствии с законодательством государств Сторон.

Статья 7

Стороны уведомляют друг друга по дипломатическим каналам об изменениях условий въезда, пребывания и выезда с территорий их государств не позднее, чем за 30 (тридцать) календарных дней до вступления в силу этих изменений.

Статья 8

Стороны по взаимному согласию могут вносить изменения и дополнения в настоящее Соглашение, которые являются неотъемлемыми частями настоящего Соглашения и оформляются отдельными протоколами.

Статья 9

Спорные вопросы, касающиеся толкования и применения положений настоящего Соглашения, регулируются путем консультаций и переговоров между Сторонами.

Статья 10

1. Каждая из Сторон имеет право полностью или частично приостановить действие настоящего Соглашения, если это необходимо для обеспечения безопасности государства, общественного порядка или защиты здоровья населения своего государства.

2. Стороны будут незамедлительно сообщать друг другу о принятии и отмене мер, предусмотренных пунктом 1 настоящей Статьи, за 15 (пятнадцать) календарных дней до принятия такого решения.

3. Полное или частичное приостановление действия настоящего Соглашения не распространяется на порядок пребывания граждан государств Сторон, находящихся на территории государства одной из Сторон, в соответствии с положениями настоящего Соглашения.

Статья 11

1. Настоящее Соглашение заключается на неопределенный срок и вступает в силу по истечении 30 (тридцать) календарных дней с даты получения по дипломатическим каналам последнего письменного уведомления о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу.


2. С даты вступления в силу настоящего Соглашения прекращает свое действие Соглашение между Правительством Республики Армения и Правительством Республики Казахстан о взаимных поездках граждан от 6 ноября 2006 года.

3. Каждая из Сторон может прекратить действие настоящего Соглашения, письменно уведомив об этом другую Сторону по

дипломатическим каналам. В этом случае действие настоящего Соглашения прекращается по истечении 90 (девяносто) календарных дней с даты получения такого уведомления.

Совершено в городе Ереване «15» апреля 2024 года, в двух экземплярах, каждый на армянском, казахском и русском языках, причем все тексты имеют одинаковую силу. В случае расхождения между текстами, Стороны обращаются к тексту на русском языке.

**За Правительство
Республики Армения**



**За Правительство
Республики Казахстан**



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024 թվականի ապրիլի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ղազախստանի Հանրապետության Կառավարության միջև քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝**



S. Levonyan
Նելլի Սարոյան